ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/8 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի կարիքների համար շենքերի մաքրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 17.12.2024թ. N 500/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.01.2025թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Երեղյանը, Ս.Ալավերդյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/8 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հանձնաժողովի նիստը և համակարգի միջոցով ծանուցել էր Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը:

-Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունը և համակարգի միջոցով ներկայացրել է շտկված տարբերակը (կցվում է):

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/8 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ 9-րդ և 10-րդ չափաբաժինները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:
3. Հաշվի առնելով, որ Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ի կողմից հայտով 2-րդ չափաբաժնի համար ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝

- Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ին 2-րդ չափաբաժնով ճանաչել ընտրված մասնակից:

4 Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ին՝ պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Գ.Երեղյան

Ս.Ալավերդյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան